

## ՎԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՄՆՈՒՆԴԸ ԵՎ ՍԵՂԱՆ ՕՐՀՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐՈՒՄ

### *Լուսինե Թումանյան*

Սույն հոդվածի նպատակն է, հիմք ընդունելով մատենագրական տարբեր վկայություններ, ներկայացնել վանքերում կենցաղավարած վանականների և առանձնակյաց ճգնավորների սնունդը ինչպես նաև վանքերում սեղանն օրհնելու կարգի ակունքները: **Վանականների կերակուրը** բավականին համեստ է եղել, անկախ այն հանգամանքից, նրանք առանձնակյաց ճգնավորներ են եղել, թե ապրել միաբանությունում: Նրանք տարվա մեծ մասը պահք են պահել, կաթնամթերք քիչ են ճաշակել, մսեղեն և գինի չեն օգտագործել: Ճգնավորների կենցաղում նկատելի են եղել նաև խստակեցության տարբեր դրսևորումներ, օրինակ՝ խոտաճարակներ (բավարարվել են բանջարաճաշակությամբ), կաթնամթերքից առհասարակ հրաժարվածներ ևն:

Համաքրիստոնեական սրբերի վարքերում պահպանվել են տարբեր ճգնավորների մասին վկայություններ: Անտոն Մեծ անապատականը սնվում էր օրը մեկ անգամ, երբեմն էլ՝ երկու կամ չորս օրը մեկ, հացով, աղով և ջրով. «Ուտէր մի անգամ յաւուրն յետ մտիցն արևու. էր երբեք զի յետ երկուց, բազում անգամ և յետ չորից աւուրց ուտէր: Եւ էր կերակուր նորա հաց և՛ աղ, և՛ ջուր ըմպելի. այլ վասն մտոյ և գինւոյ և ասել իսկ ակելի է»<sup>1</sup>: Սուրբ Ոնոփրիոսը, որ մանկուց մեծացել էր վանական միաբանության մեջ, իսկ հետո տրվել առանձնական ճգնության, իրեն այցելած Պափնոտիոսին ասում է, որ իր կերակուրն էր «ի վայրի արմաւենեաց եւ ի դալար խոտոց», իսկ Տիրոջ հրեշտակը ամեն կիրակի Հաղորդություն էր տալիս<sup>2</sup>: Ազաթանգեղոսի Պատմությունից գիտենք, որ Հռիփսիմյաց կոյսերը «ընդակերս» էին. «Յայնմ ժամանակի եկեալ գտանէին ի քաղաքին Հռոմայեցոց արգելավանս մի կուսանաց՝ միանձնական լեռնական, ընդակերս, զգաստացեալս, պարկեշտականս, սրբամատոյց կանայս

<sup>1</sup> Վարք սրբոց հարանց եւ քաղաքաւարութիւնք նոցին, հտ. Ա, Վենետիկ-Ս. Ղազար, 1855, էջ 23:

<sup>2</sup> Յայսմատուրք, Կ. Պոլիս, 1730, էջ 2ՃԺ:

քրիստոսական հաւատոց, որ զգայ՞ք եւ զցերեկ եւ յամենայն ժամանակի փառաւորութեամբ եւ արհնութեամբ զկատարեալ աղաւթսն իւրեանց առ Աստուած առաքել ի բարձունս արժանի լինէին»<sup>1</sup>: Ընդեղեն նշանակում է ցորեն, ձավար, գարի, բրինձ, ոսպ, լոբի, սիսեռ և այլ հատիկավոր սննդանոթներ<sup>2</sup>:

Ե՛վ առանձնակյաց անապատականները, և՛ վանքերում կենցաղավարողները սնվել են բավականին չափավոր: Եղիշեն հայ անապատականներին ուղղված իր Խրատում, ներկայացնելով «ի կողմանս հարաւոյ» ճգնող անապատականների կենցաղավարությունը, գրում է նրանց անչափ համեստ կերակրի մասին. «հաց է նոցա անպաճոյճ եւ բանջար վայրենի՝ զոր համով աղին համեմեն, եւ ջուր յստակ՝ զոր յամպոց բերմանէ ի գութս ժողովեն»<sup>3</sup>: Վանքերում առհասարակ արգելված են եղել մսեղեն կերակուրներն ու գինի ըմպելը: Այս մասին հիշատակվում է միանձանց ուղղված գրեթէ բոլոր խրատներում և կանոններում, օրինակ՝ Թաթուլ ճգնավորի խրատում. «Միս եւ գինի կրօնաւորաց ոչ է ուտելի»<sup>4</sup>: Եղիշեն իր խրատում ևս գրում է. «այլ գինի եւ կամ այլ ինչ զանազանեալ, եւ գտանի ոչ ի սուրբ միայնանոցս նոցա»<sup>5</sup>:

Հայ մատենագիրների երկերում կան տարբեր տեղեկություններ՝ ճգնավորների խստակենցաղության և համեստ կերակրի մասին: Հայոց դարձից հետո (301 թ.) Գրիգոր Լուսավորչի խնդրանքին ընդառաջ՝ Կեսարիայի (Կապադովկիա) Ղևոնդիոս պատրիարքը քառասուն խարագնազգեստ կրոնավորներ է ուղակում Հայաստան՝ վանական կյանքը զարգացնելու և կանոնավորելու համար, որոնք բնակվում էին շենքերում և ամայի վայրերում, լեռներում ու անձավներում<sup>6</sup>:

<sup>1</sup> Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց, աշխ.՝ Գ. Տէր-Մկրտչեանի եւ Ստ. Կանայեանցի, «Մատենագիրք Հայոց», հտ. Բ, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1373:

<sup>2</sup> Տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հտ. 2, Երևան, 1944, էջ 56:

<sup>3</sup> Եղիշէ, Բան խրատու յաղագս միանձանց, «Մատենագիրք Հայոց», հտ. Ա, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 931. այս խրատում «ի կողմանս հարաւոյ»՝ ասելով Եղիշեն թերևս նկատի ունի Եգիպտոսի կամ Պաղեստինի անապատականներին:

<sup>4</sup> Հ. Մկրտիչ Աւգերեան, Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց, հտ. Է, Վարք սրբոց հարցն Թաթուլի եւ Վարոսի եւ Թումասու, Վենետիկ-Ս. Ղազար, 1813, էջ 27:

<sup>5</sup> Եղիշէ, Բան խրատու յաղագս միանձանց, էջ 932:

<sup>6</sup> Տե՛ս Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց, աշխ.՝ Գ. Տէր-Մկրտչեանի եւ Ստ. Կանայեանցի, «Մատենագիրք Հայոց», հտ. Բ, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1707:

IV դարի նշանավոր վանականներից էր քորեպիսկոպոս Դանիել Ասորին, որ Գրիգոր Լուսավորչի աշակերտներից է եղել և նշանակված էր Տարոնի հոգևոր առաջնորդ: Համաձայն Փավստոս Բուզանդի՝ Դանիել ծերունին բնակվում էր ամայի լեռներում, վանքերի տեսչության համար երբեմն այցելում էր վանքերն ու եկեղեցիները, նա կրում էր կենդանու մորթից պատրաստված կամ կենդանու մազից գործված պարեգոտ, իսկ կերակուրը բանջարեղեն էր. «միահանդերձ մաշկանափորտն սանդաղաւոր, եւ կերակուր իւր արմատք բանջարոց, եւ գաւազան անգամ ընդ ինքեան ոչ ունէր»<sup>1</sup>: Դանիել Ասորու աշակերտներից էր նաև Գինդը Տարոն գավառից, որ հետագայում նշանակվեց «գլուխ աբեղայից, եւ վարդապետ միանձանց, եւ առաջնորդ մենակեցաց, եւ վերակացու վաներայից, եւ ուսուցիչ ամենայն անապատաւորաց»<sup>2</sup>:

Անդրադառնալով Գինդ կրոնավորին և նկարագրելով անապատականների կենցաղավարությունը՝ Փավստոս Բուզանդը գրում է, որ նրանք հանուն Աստծու սիրո աշխարհիկ կյանքը թողել և ամայի վայրեր էին հեռացել, ապրում էին քարանձավներում, նրանց հանդերձը կենդանու մորթն էր, կերակուրը՝ կանաչեղեն, ընդեղեն, արմատեղեն. «վասն սիրոյն Աստուծոյ յաշխարհէ էին մեկնեալ, ի յանապատս բնակեալ, ի քարանձաւս ամրացեալք յայրս եւ ի քարածերպս երկրի, եւ միահանդերձ բոկագնացք, զգաստացեալք, խոտաճարակք, ընդաբուտք, արմատակերք, զաւրէն գազանաց ի լերինս շրջէին՝ լեշկամաշկաւք եւ մորթաւք այծենեալք, նեղեալք տառապեալք եւ տարակուսեալք, յանապատի մոլորեալք, ի ցուրտ եւ տաւթ, ի քաղց եւ ի ծարաւ վասն սիրոյն Աստուծոյ»<sup>3</sup>: Կորյունը, շարադրելով իր ուսուցչի՝ հայոց մեծ վարդապետ Մեսրոպ Մաշտոցի վարքը, գրում է, որ նա շատ և տեսակ-տեսակ վշտակեցություններ կրեց, իրեն հանձնել էր ամեն տեսակ հոգևոր վարժությունների՝ «միայնաւորութեան, լեռնակեցութեան, քաղցի եւ ծարաւոյ եւ բանջարաճաշակութեանց, արգելանաց անլուսից, խարազնազգեստ եւ գետնատարած անկողնոց»<sup>4</sup>:

<sup>1</sup> **Փավստոս Բուզանդ**, Պատմութիւն Հայոց, «Մատենագիրք Հայոց», հտ. Ա, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 297:

<sup>2</sup> **Փավստոս Բուզանդ**, նշվ. աշխ., էջ 423:

<sup>3</sup> Նոյն տեղում, էջ 423:

<sup>4</sup> **Կորյուն**, Վարք Մեսրոպ Մաշտոցի, Երևան, 1994, էջ 39, 88:

Հայ մատենագրության մեջ պահպանված «Կարգ եւ կանոն աղաթից» բնագիրը, հիմք ունենալով Թեղենյաց վանքի կարգը, պատգամում է վանականներին ամբողջ տարին պահք պահել և միայն շաբաթ և կիրակի օրերը լուծանել, սակայն միս և գինի բնավ չօգտագործել. «այլ որպէս խրատեն զմեզ Գիրք, ըստ վարուց հարանց եւ ըստ սահմանին Թեղենեաց՝ զամենայն ժամանակքդ ի պահպանութեան կայցես, զշափաթ եւ զկիրակին միայն լուծցես առանց մսոյ եւ արբեցութեան. զմսոյ եւ զգինոյ յիշատակ ի մտացտ ամենեւին ջնջեսցես մինչ ի մահ»<sup>1</sup>: Հեղինակը, կարևորելով նաև մտքի մաքրությունը և մտքում պայքարը, պատգամում է. «Եւ թէ ի ժամն քաղցոյ կամ ի պարկեշտութեան չարն ի միտ արկեալ, թէ ոմանք բազում անկամ կերեալ են, եւ դու սովիւ, դու ընդդէմ խորհրդոցն բեր զառաջին սուրբքն, թէ զիրեանց ժամանակն սովով եւ ծարաւով անցուցին, եւ հազիւ թէ ոմանք հաճոյացան»<sup>2</sup>:

Ներսէս Շնորհալին «Թուղթ ընդհանրական»-ում կրոնավորներին խրատում է՝ ասելով. «զի թէպէտ և յոլովս ունիցիք զնիւթ կերակրոյ և ըմպելոյ առ ձեռն և առտնին, այլ հոգիս ձեր խնայելով մի ազահութեամբ և որկորստութեամբ յայնոսիկ վարիցէք, այլ ըստ կարգի կրօնաւորաց»<sup>3</sup>: Գրիգոր Մագիստրոսը Սանահինի վանականներին ուղղված իր թղթում անդրադառնում է նրանց խստակենցաղ վարքին և աղքատիկ սնունդին՝ նշելով, որ ուտում էին խոտեղեն՝ «ի կերակուրս մարդկայինս ոչ հպեցելոյ, այլ խոտովք վայրենի շատացեալք», հաճախ դիմանում էին քացին ու ծարավին՝ «և սովու և ծարաւու համբերեալ»<sup>4</sup>, երբեմն էլ արեգակի ջերմությամբ բլիթներ պատրաստում. «Եւ ոմանց ի տերևոց ցաքոյ և ի կորզոց հիւնից աղացեալ թրէին, յարեգակնային տապոյն արարեալ բլիթս, և այն իսկ էր նոցա կերակուր, և ոչ հաց, այլ ամենևին ջուր, բայց միայն եթէ թթուիկ յեւթերորդում աւուրն»<sup>5</sup>:

<sup>1</sup> Կարգ եւ կանոն աղաթից, բնագիրը և առաջաբանը՝ Հր. Թամրազյանի, «Մատենագիրք Հայոց», հտ. Ժ, Անթիլիաս-Լիբանան, էջ 1091:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> **Ներսէս Շնորհալի**, Թուղթ ընդհանրական, աշխ.՝ Է. Բաղդասարյանի, Երևան, 1995, էջ 86:

<sup>4</sup> **Գրիգոր Մագիստրոս**, Թուղթք, Աղէքսանդրապոլ, 1910, էջ 137:

<sup>5</sup> **Գրիգոր Մագիստրոս**, Թուղթք, էջ 138: Ցաքին անվանում են նաև ժանտափուշ, փշենի, առատ ճյուղավորվող, փշոտ թուփ է, աճում է չոր, քարքարոտ վայրերում. տե՛ս Հ.

Մատթեոս Ուռհայեցին պատմում է Մարկոս անունով մենակյացի մասին, որ վաթսունհինգ տարի խոտաճարակությամբ էր ապրել. նա բնակվում էր Մոկաց գավառում մի անջրդի լեռան վրա և աղոթքներով ջուր բխեցնում<sup>1</sup>: Ստեփանոս Օրբելյան պատմիչը գրում է, որ Վայոց Ձորի Խոտակերաց վանքի տեղում, մինչ Սյունաց Աշոտ իշխանի և Շուշան իշխանուհու կողմից վանական շինության կառուցումը (X դ.), բազում ճրգնավորներ էին ապրում «խոտաճարակ եւ խարագնազգեստ»<sup>2</sup>: Աղոթասեր և համեստ կյանքով էին ապրում նաև Թանահատի վանքի միաբանները: Համաձայն Ստեփանոս Օրբելյան պատմիչի նկարագրության՝ նրանք կատարում էին բոլոր աղոթասացությունները, սնվում բանջարեղենով և հրաժարվել էին անգամ կիրակի օրերը կաթնամթերք (թան, պանիր) և յուղ օգտագործելուց, որից էլ վանքի Թանահատ անունը. «Եւ էին սահմանաւորք, մշտապաշտօնք, հեռացեալք յամենայն փափուկ կերակրոց, միայն աշտուն հացիւ եւ լոկ ջրով վճարէին զպէտս իւրեանց, եւ զայն յաւուրն միանգամ ընդ երեկո. լռիկք, հեզաշարժք, որք իբր կանթեղունս անշէջս կախեալք լինէին յաղօթս զցայգ եւ զցերեկ. եւ պաշտօնք իւրեանց երբէք ոչ խափանէին, զցայգ եւ զցերեկ... ոչ առին յանձն ի կիրակէքն ի թան կամ ի պանիր, կամ յիւղ խթիլ, այլ բանջարօք եւ ընդով շատանային. վասն որոյ թանահատք կոչեցան»<sup>3</sup>:

Պատմագիր Առաքել Դավրիժեցին, ներկայացնելով Սյունիքի Հարանց անապատի հիմնադրումն ու կենցաղավարության կարգերը, գրում է, որ անապատականները իրենց խցերում ուտելիք չէին պահում, բացի շաբաթ, կիրակի և տերունական տոն օրերից, պահք էին պահում ողջ տարին և իսպառ հրաժարվել էին մսից և գինուց: Սուրբ Պատարագից հետո անմիջապես չէին գնում ճաշելու, այլ յուրաքանչյուր միաբան գնում էր իր խուցը՝ առանձնական աղոթքի: Կոչնակի զանգը խփելուն պես հավաքվում էին սեղանատանը, լռելյայն ուտում, իսկ նրանցից մեկն ընթերցում էր Սուրբ Գրքից հատվածներ. «Եւ յորժամ հարկանէին զկոչնակ սեղանոյն, ապա ամենեքեան ժողովէին ի սեղանատունն, եւ միահաղոյն

Ղեւոնդ Ալիշան, Հայբուսակ կամ հայկական բուսաբանություն, Վենետիկ-Ս. Ղազար, 1895, էջ 619: «Ի կորզոց հինից» ասելով թերևս նկատի ունի հոնի պտուղները:

<sup>1</sup> **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 300-301:

<sup>2</sup> **Ստեփանոս Օրբելյան**, Պատմություն նահանգին Սիսական, աշխ.՝ Կարապետ վրդ. Շահնազարեանց, Թիֆլիս, 1910, էջ 234:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 160:

նստեին ի սեղան, եւ ուտէին լոելեայն, եւ յօրն միանգամ առնուին կերակուր, ի բոլոր տարին. եւ յուտելն զկերակուրն սահմանեցին գիրս ընթեռնուլ, որպէս քիմք զհամս ճաշակեն, սոյնպէս եւ միտք զբանս Աստուծոյ քննեսցեն»<sup>1</sup>:

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններում առկա տարբեր գրառումներ ևս փաստում են, որ վանքերում սնունդը աղքատիկ է եղել: Գլաձորի Աղբերց վանքում գործող համալսարանում կրոնավոր Մխիթար Երզնկացին 1314 թ. իր ձեռագրի հիշատակարանում դառնությամբ է գրում, որ անգամ չոր հաց և սպաս չեն ունեցել ուտելու. «Թուղթս անկոկ ու գրիչ չկայ, / Աւուրքըս ցուրտ ու պարզկա, / Չարտախս բարձր ու կրակ չկայ, / Դոներս (= չոր հաց) չոր ու սպաս չկայ, / Եւ այս Գլաձորն ո՛վ գիտենայ, / Ես յոյժ նեղաց ու ճար չկայ, / Եւ ես պանդուխտ ու վեղար չկայ...»<sup>2</sup>: Գլաձորի համալսարանի մեկ այլ սան, կրոնավոր, հայտնի վարդապետ Առաքել Հաղպատեցին 1313 թ. իր ձեռագրի հիշատակարանում սիրով է հիշում Ստեփանոս կրոնավորին (եղել է Սյունաց Աթոռի մետրոպոլիտ), որ «եբեր մեզ միրգ եւ ջուր ցուրտ, որ եւ տացէ Քրիստոս նմա զջուրն ցուրտ»<sup>3</sup>: Վանքեր գնացող ուխտավորները հաճախ են իրենց հետ ուտելիք տարել վանականներին, որի համար արժանացել են երախտագիտական խոսքերի: Ընդ որում, երբեք չենք հանդիպում, որ բերեն մսեղեն, ինչը ևս մեկ անգամ ապացուցում է վանքերում դրա արգելքի մասին: Օրինակ՝ 1201 թ. Երզնկայի Ավագ վանքում Հովհաննես գրիչը իր ընդօրինակված Ավետարանի (Երուսաղեմ, ձեռ. 3274) հիշատակարաններից մեկում օրհնում է իրեն տաք հաց բերած Մարտիրոս միայնակյացին. «Յայսմ վայրի եկն ձերունին միայնակեցն Մարտիրոս եւ եբեր մեզ տաք բաղարջ ի պատճառս սիրոյ, հատուցէ նմա Տէր»<sup>4</sup>:

Պահքի օրերը վանքերի համար բավականին շատ են եղել՝ պահել են

<sup>1</sup> **Առաքել Դարիժեցի**, Գիրք պատմութեանց, աշխ.՝ Լ. Խանալարյանի, Երևան, 1990, էջ 221:

<sup>2</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, մասն Ա, կազմ.՝ Լ. Խաչիկյան, Ա. Մաթևոսյան, Ա. Ղազարոսյան, Երևան, 2018, էջ 256:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 235:

<sup>4</sup> **Խ. Հարությունյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, Երևան, 2019, էջ 247: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմ.՝ Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 17: Այս և նմանատիպ այլ օրինակներ տե՛ս Խաչիկ Հարությունյանի նշյալ աշխատությունում (էջ 247-252):

եկեղեցական օրացույցով սահմանված բոլոր օրապահքերը, շաբաթապահքերը և Սուրբ Զատիկին նախորդող մեծ պահքը: Օրապահք են չորեքշաբթին և ուրբաթը, որոնց մասին սահմանված է նաև «Կանոնք առաքելականք»-ում. «Կարգեցին առաքելալքն եւ եղին հաստատութեամբ, թէ ար չորեքշաբաթու ի պահս եղիցի...» (կանոն Գ.), «Կարգեցին առաքելալքն եւ եղին հաստատութեամբ, թէ ուրբաթ եղիցի ի պահս եւ ի սուգ եւ ի տրտմութիւն...» (կանոն Դ):

Ներքին կարգի համաձայն՝ վանքերում ընդունված է եղել երեք մեծ պահք՝ Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության, Սուրբ Հարության կամ Սուրբ Զատիկի, Պայծառակերպության կամ Վարդավառի տոներից առաջ<sup>2</sup>: Զատկական Մեծ պահքը կանոնականացվել է դեռևս IV դարում, այն առկա է Առաքելական (կանոն Ը), Սահակ Պարթևի անունով հայտնի (կանոն Խ)<sup>3</sup> և այլ կանոնախմբերում, Տոնացույցի բոլոր խմբագրություններում և այլուր<sup>4</sup>: Այն պարտադիր է եղել բոլոր քրիստոնյաների համար: Սահակ Պարթևին վերագրվող նշյալ կանոնում Զատկականից բացի, նշված է նաև Աստվածահայտնության քառասնորդացի մասին, իսկ Խոսրովիկը երեք տոներից առաջ պահքերի մասին էլ հիշատակում է. «գերիս յիսներեակսն» խոսքերով<sup>5</sup>:

Կանոնագրքում տեղ գտած մի շարք կանոններում խոսվում է Սուրբ Ծննդյան պահքի մասին՝ սահմանելով քահանաների, վանականների, կրոնավորների, ապաշխարողների համար պահել ոչ թե ութօրյա, այլ

<sup>1</sup> Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հտ. Ա, Կանոնք Առաքելականք, աշխ.՝ Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 30:

<sup>2</sup> Աստվածահայտնության և Վարդավառի մեծ պահքերի մասին մանրամասն տես Համիկ Աբրահամյանի հոդվածներում՝ «Վարդավառի Քառասնորդաց (Հիսնակաց) պահքը», Լրաբեր, Երևան, 2017, № 2, էջ 345-354, «Աստվածահայտնության Քառասնորդաց (Հիսնակաց) պահքը (պատմական համառոտ ակնարկ)», ՀԱԻ աշխատություններ, № 1, Երևան, 2018, էջ 243-253:

<sup>3</sup> Համաձայն Ռ. Վարդանյանի՝ սույն կանոնը պատկանում է Ներսես Բ Բագրևանդեցի կաթողիկոսին և Ներշապուհ եպիսկոպոսին պատկանող. տե՛ս Ռ. Վարդանյան, Հայոց տոնացույցը (4-18-րդ դդ), Երևան, 1999, էջ 108:

<sup>4</sup> Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հտ. Ա, էջ 32-33, 397-400: **Ռ. Վարդանյան**, Հայոց տոնացույցը (4-18-րդ դարեր), Երևան, 1999, էջ 622-627: **Հ. Աբրահամյան**, Աստվածահայտնության Քառասնորդաց (Հիսնակաց) պահքը, էջ 243:

<sup>5</sup> Տե՛ս **Հ. Վարդան Հացունի**, Ճաշեր եւ խնճոյք հին Հայաստանի մէջ, Վենետիկ-Ս. Ղազար, 1912, էջ 427:

մեծ պահք (քառասուն օր կամ հիսնյակ). «Կանոնք Տեանն Եփրեմի արդիւնակատար կրանաւորի զոր ուսուցանէր յանապատին ի կուսութեան ճառէն (կանոն 2)», «Հիպոդիտեայ սրբոյ բան ի Ծնունդն եւ ի Մկրտութիւնն Տեանն», «Կանոն երանելոյն Եպիփանու Կիպրացոյ եպիսկոպոսի մեծի եւ առաքինոյ մարգարէի եւ նշանագործի. (կանոն Գ)», «Նեկտարեայ Հռոմայ եպիսկոպոսի», «Մելիտոնի եպիսկոպոսի թուղթ առ Եւտրեպիոն»<sup>1</sup>: Վերոնշյալներից Եփրեմ Ասորուն վերագրվող կանոնախմբում ասված է. «Պահք Աստուածայայտնութեան այսպէս կարգեցան. կրանաւորաց եւ այրեաց եւ ապաշխարողաց՝ Ծ. ար պահք կարգեցան եւ հաստատեցան, իսկ աշխարհականաց՝ ութարեայ, բայց ի պահել ութարեայ՝ եւ զկիրակէն...»<sup>2</sup>:

Գրիգոր Տաթևացին ևս նշում է, որ վանականները երեք քառասնորդաց պահք են պահում. «Այն որ աղուիացն է՝ տարւոյն պահքն է. զոր յամենայն տարի միանգամ պահեմք առհասարակ ամենայն քրիստոնեայքս. թէպէտ կարգաւորք երեք քառասունք պահեն. այլ աշխարհականք միայն զաղուիացիցն պահեն: ...Եւ զայս առաքեալքն կարգեցին պահել ի տարին զերեք քառասունս. նաեւ զուրբաթ եւ զչորեքշաբաթ օրն պահս»<sup>3</sup>: Գյուտ եպս. Տեր-Ղազարյանը, գրելով Սևանա վանքի պատմությունը և անդրադառնալով XIX դարում և XX դարասկզբին միաբանների կենցաղին, նշում է երեք մեծ պահքերի մասին. «Բացի Մեծ պասից եւ շաբաթական ու օրական պասերից կար եւ երկու յիսնեակի պաս. մէկը Հոգեգալստեան պասից մինչեւ Վարդավառ, միւսն էլ աշնան յիսնակի սկզբից մինչեւ աւագ տօները: Ծննդեան առաւօտը, Վարդավառին, երբեմն վանահօր տօնին արտակարգ հիւրասիրութիւն էր լինում վանահօր կողմից»<sup>4</sup>: Այսպիսով, եթե աշխարհականների համար սահմանված էր միայն Չատկական մեծ պահքը, ապա վանքերում հիմնականում ընդունված էր երեք մեծ պահք պահելու սովորությունը:

Որոշ տվյալներ ունենք XIX դարում և XX դարասկզբին հայկական մենաստաններում կերակրի մասին: Լիմ անապատի վանահայր Հակոբ

<sup>1</sup> Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հտ. Բ, աշխ.՝ Վ. Հակոբյանի, Երևան, 1971, էջ 57-58, էջ 280, էջ 282-286:

<sup>2</sup> Կանոնագիրք Հայոց, հտ. Բ, էջ 57-58:

<sup>3</sup> **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան, որ կոչի Ձմեռան հատոր, Քարոզ ԻԷ, Կ.Պոլիս, 1740, էջ 148:

<sup>4</sup> **Գիւտ եպիսկոպոս**, Սեանայ վանքը, Վիեննա, 1929, էջ 82:



վրդ. Թովուզյանը 1870 թ. իր հեղինակած «Զբօսարան» գրվածքում նշում է, որ Լիմում միսը և գինին առհասարակ արգելված են եղել, պահել են օրացույցով նախատեսված բոլոր պահքերը, այդ թվում՝ երեք մեծ պահքերը, նաև՝ 15-ական օր պահել են Վերափոխման և Խաչվերացի տոներին, երկու շաբաթ՝ Հրեշտակապետաց տոնին, երկուշաբթի օրերը՝ ի պատիվ հրեշտակների, հասարակ օրերին պահքը լուծարել են միայն երեքշաբթի և հինգշաբթի՝ թանապուրով, իսկ շաբաթ և կիրակի օրերը գործածել են նաև յուղային կերակուրներ<sup>1</sup>: Ե. Լալայանը ևս անդրադարձել է Լիմ անապատի մենակյացների սննդակարգին՝ գրելով, որ սովորաբար սնվել են արմատեղենով եւ բանջարեղենով, կաթնամթերք օգտագործել միայն տոն օրերին, միս և գինի չեն գործածել, սնվել են օրը մի անգամ՝ հընթացս ունկնդրելով Սուրբ Գրքի ընթերցանությանը. «Միաբանների սնունդը չափազանց պարզ է եղել. մսի և գինու գործածությունը միանգամայն արգելուած է. սովորաբար գործ են ածում արմատեղէն և բանջարեղէն, իսկ նշանաւոր տօներին կաթ, մածուն և մանաւանդ թանապուր: Բոլոր պասերը խստիւ պահել են, և նոյն իսկ բացի չորեքշաբթի և ուրբաթ օրերից պաս են պահել նաև երկուշաբթի օրերը, նշանաւոր շաբաթապասերին մի շաբաթ էլ աւելի են պահել: Սովորաբար օրը միայն մի անգամ են ճաշել ընդհանուր սեղանատանը՝ ուր մինը բարձրաձայն կարդացել է Ս. Գրքից կտորներ: Ճաշը գրեթէ միշտ բաղկացած է միայն մի տեսակ կերակրից»<sup>2</sup>:

Զաքարիա վրդ. Բեհբուդյանցը 1825 թ., համառոտաբար գրելով Սևանա վանքի պատմությունը, անդրադառնում է նաև միաբանների կենցաղին: Ճաշում էին օրը մեկ անգամ, կերակուրը բաղկացած էր ընդեղենից, բացի շաբաթ և կիրակի օրերից մնացած օրերը պահք էին պահում, ոմանք հիմնականում սնվում էին հացով ու ջրով, ոմանք էլ՝ շաբաթվա հինգ օրը ծոմ էին պահում. «Եւ որպէս մարմնաւորն պահեն պահս հրաժարմամբ ի կերակրոց, ըստ ամենայնի եւ զհոգեւորն պահեն, հրաժարմամբ ի մեղաց ըստ կարի»<sup>3</sup>: Ազգագրագետ Ե. Լալայանը, հետ-

<sup>1</sup> **Յակոբ վրդ. Թօփուզեան**, Զբօսարան, Երուսաղէմ, ձեռ. 2086, էջ 58: Բնագիրը մեզ տրամադրելու համար շնորհակալ ենք Երուսաղէմի Սրբոց Հակոբյանց վանքի միաբան Տ. Շնորհք արեղա Պալոյանին:

<sup>2</sup> **Ե. Լալայեան**, Վասպուրական. նշանաւոր վանքեր, Թիֆլիս, 1912, էջ 88:

<sup>3</sup> Վէպ ծովակին Գեղամայ եւ երջանիկ կղզւոյն Սեւանայ... ի Զաքարիա վարդապետէ Գուլասպեան Բեհբուդեանց..., ՄՄ, ձեռ. 8074, էջ 32-33: Բնագիրը մեզ տրամադրելու

ևելով Չաքարիա վարդապետին, Սևանավանքի միաբանների սննդի մասին գրում է. «Ճաշու ժամից առաջ նախ ասում են մի կանոն սաղմոս, ապա երեք ողորմեա, պաս օրերին նաև մեծ քարոզ և աղօթքները. ապա ճաշու ժամը: Ժամից յետոյ գնում են սեղանատուն ճաշելու ուր նրանցից մէկը կարդում է Հարանց վարքից, ի լուր միաբանների:... Հասարակաբար օրը մի անգամ են ուտում. նրանց կերակուրը կազմում է լոբին, ոսպն ու միս ընդեղէնները: Շատերը պաս են համարեա ամբողջ տարին, բացի շաբաթ, կիրակի և տօն օրերից. իսկ ուտիս օրերին նաւակատեաց կերակրով են բաւականանում: Ոմանք տաք կերակուր չեն ուտում, այլ լոկ հացով ու սառը ջրով են շատանում: Ոմանք օրերով ծոմ են մնում, բայց, որքան կարելի է, ծածուկ»<sup>1</sup>:

Ինչպես պարզ դարձավ վերոնշյալ մատենագրական վկայություններից՝ վանականները և անապատականները սնվել են բավականին զուսպ, միսը և գինին, որպես կանոն, բացառված են եղել, տարվա մեծ մասը պահք են պահել՝ լուծարելով հիմնականում շաբաթ և կիրակի օրերին: Շատ առանցնակյաց ճգնավորներ կամ վանքերի միաբաններ սահմանափակվել են միայն խոտեղեն, կամ դրանից բացի նաև ընդեղեն ուտելով:

Արդյո՞ք հայկական վանքերում ճաշակել են մատաղի միս. սույն հարցի շուրջ մեզ տվյալներ է տրամադրել ազգագրագետ Հասմիկ Աբրահամյանը՝ վերաբերող Սևանա վանքում մատաղի միս ուտելուն: Այսպես, Հուսիկ եպիսկոպոսն իր գրքում հաղորդում է, որ վանականները իրավունք են ունեցել մատաղի միս ճաշակելու, Ջրօրհների օրը (Հունվարի 6-ին) և Մեծ բարեկենդանին միս են մորթել. «Սևանում ճաշու ժամն արձակվելիս միաբանները սեղան են գնում, ուր ճաշի ժամանակ նրանցից մէկը կարդում է Հարանց վարքից (վերջերս Սարգիս Շնորհալու յորդորակներից): Ուտիս օրերին պաշտօնապէս նաւակատիք է: Յատկապէս միաբանաց համար միս մորթում է տարուայ մէջ երկու անգամ՝ Ջրօրհնեաց տօնին և Բուն բարեկենդանին. թէև միաբանները մսեղէն ուտում են այն ժամանակ, երբ ուխտաւորները նրանց մատաղի են հրաւիրում»<sup>2</sup>:

Հաջորդ տվյալը Մուրացանի «Առաքյալը» վեպից է: Սևանավանքի

համար շնորհակալ ենք Մաշտոցի անվ. Մատենադարանի ավագ գիտաշխատող, պ.գ.թ. Արփենիկ Ղազարոսյանին:

<sup>1</sup> Ե. Լալայեան, Ազգագրական հանդէս, Թիֆլիս, 1908, հմր. 1, էջ 69-70:

<sup>2</sup> Յուսիկ եպիսկոպոս, Անապատականներ եւ վանականութիւն, Վաղարշապատ, 1906, էջ 143:

վանահայրը Կամսարյանին առաջնորդեց դեպի՝ ուռենիների տակ փրո-ված իրենց «անպաճույճ» ճաշի սեղանի մոտ. «Ակրատը բաղկացած էր պանրից, եփած ձուերից և աղած կողակից, իսկ խորտիկը, որ հետո բե-րին, թանապուրից, նոր խաշած իշխաններից և ծավարով ու յուղով պատրաստած «քաշովի»-ից: Սեղանի վրա պակաս էր միայն միսը, կամ նրանից պատրաստված կերակուրը: Վանահայրը բացատրեց, որ վանա-կան խստակեցության օրենքը արգելում է իրենց՝ զոհի մսից զատ, ուրիշ միս ուտել, կամ գործածել այն կերակուրի մեջ»: Ապա վանահայրը ծանո-թացրեց Սևանա անապատում ընդունված պահեցողության կարգերին, «որից երևաց, որ նրանք տարվա մեծագույն մասն անցկացնում են պահ-քով: Որովհետև բացի հասարակ ու շաբաթական պասերը, նրանք պա-հում էին նաև երեք «մեծ պասեր»: Դրանցից առաջինը սովորական մեծ պասն էր, որ Բուն Բարեկենդանից սկսվելով, վերջանում էր Ջատկին, երկրորդը՝ Հոգեգալուստից մինչև Վարդավառ, որ տևում էր ութ շաբաթ, երրորդը՝ Վարագա Խաչի տոնից մինչև Հիսնակի պասը, որ դարձյալ ու-ներ ութ շաբաթ»: Այդ բոլոր կարճ ու երկար պահքերին վանքի միաբա-նությունն ուտում էր ձեթ, լոբի, սիսեռ, ոսպ ու կանաչի: Միայն ուտիքին էր, որ յուղ, կաթ ու ձու կարող էին ուտել, կամ բրինձ ու ծավար, իսկ ծո-վից հանած ձկներից էլ ուտում էին, որքան պատահում էր<sup>1</sup>:

Այժմ անդրադառնանք վանքերում **Սեղանն օրհնելու կարգին**: Ժամա-գիրք ծիսամատյանը մեզ է ավանդում Սեղանօրհնեքի կարգ՝ «Օրհնութիւն սեղանոյ վասն մարմնատր կերակրոյ եւ ըմպելեաց», որը տպագիրներում հիմնականում ճաշու իններորդ ժամից հետո է<sup>2</sup>: Փորձենք ճշտել այս կարգի ակունքները: Նյութին որոշակիորեն անդրադարձել է Մխիթարյան հայրե-րից Վարդան Հացունին՝ ներկայացնելով կարգի զարգացումը՝ համաձայն տարբեր դարերի ձեռագիր ժամագրքերի և սկզբնաղբյուրների<sup>3</sup>:

Նշենք, որ դեռևս Հնուց եկած սովորության համաձայն՝ անապատա-կանները և վանականները օրը մեկ անգամ էին ճաշում. այս սովորությու-նը բնորոշ էր առհասարակ բոլոր երկրների վանականներին<sup>4</sup>: Որպես կա-

<sup>1</sup> **Մուրացան**, Առաքյալը, Երևան, 1989, էջ 578: Ձոհի միս ասելով նկատի ունի մատաղը: Նյութը տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, պ.գ.թ. Հասմիկ Աբրահամյանին:

<sup>2</sup> Տե՛ս Ժամագիրք Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1902, էջ 405-410:

<sup>3</sup> **Հ. Վարդան Հացունի**, Պատմութիւն Հայոց Աղօթամատոյցին, Վենետիկ – Ս. Ղազար, 1965, էջ 268-269, 294, 323, 335-336, 341-344:

<sup>4</sup> **Հ. Վարդան Հացունի**, Ճաշեր եւ խնճոյք հին Հայաստանի մէջ, էջ 215:

նոն, ճաշում էին արևը մայր մտնելուց հետո կամ ճաշու ժամերգությունից (Իններորդ ժամի) հետո<sup>1</sup>: Սրանով է պայմանավորված, որ ձեռագիր ժամագրքերում Սեդան օրհնելու կարգը երբեմն ճաշու իններորդ ժամից հետո է, երբեմն՝ Երեկոյան ժամերգությունից: Ձեռագրերի հիմնական մասում, օրինակ՝ Վենետիկի 1284 թ. ժամագրքում (ձեռ. 677/629)<sup>2</sup>, Մատենադարանի ձեռ. 4531 (115թ-118թ, XIV դար) և ձեռ. 6121 (90ա-91թ, 1443 թ.) ձեռագրերում<sup>3</sup> կարգը ճաշու ժամերգությունից հետո է, իսկ Վենետիկի 1375 թ. ժամագրքում (ձեռ. 364/631)<sup>4</sup>, Մատենադարանի ձեռ. 585<sup>5</sup> և ձեռ. 4315 (XV դար)<sup>6</sup>, Չմնադի ձեռ. 49 (հին թիվ՝ 112, XIV-XV դդ.)<sup>7</sup> և այլ ձեռագրերում՝ Երեկոյան ժամերգությունից հետո: Ճաշելու ժամի մասին Եղիշեն իր խրատում գրում է. «Ի խաարային ժամուս զխաարային կերակուրս խաարային մարմնոյս տացուք»<sup>8</sup>: Համաձայն աստղագետ-տոմարագետ Գրիգոր Բրուտյանի՝ «Խավարային ժամ» ասելով Եղիշեն նկատի ունի գիշերվա առաջին ժամի անունը, որը կոչվում էր «Խավարական»<sup>9</sup>: Նարեկավանքի հիմնադիր Անանիա վարդապետը կրոնավորներին խրատելիս որպես ճաշի ժամ նշում է 9-րդ ժամը. «...բաականասցի քեզ յիններորդ ժամու ճաշակել զհացիկն քո հանդերձ պարկեշտութամբ»<sup>10</sup>:

Անդրադառնանք մի հանգամանքի ևս. ցերեկվա և գիշերվա 12-ական ժամերը ներառված էին երեքական պահերի մեջ (յուրաքանչյուր

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 276:

<sup>2</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Դ, կազմ.՝ հ. Ս. վ. Ճենճեմեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1993, էջ 871:

<sup>3</sup> ՄՄ, ձեռ. 4531, 115թ-118թ, ՄՄ, ձեռ. 6121, 90ա-91թ:

<sup>4</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Դ, էջ 881:

<sup>5</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Բ, ձեռ. 585, 143ա-146ա, կազմ. Օ. Եգանյան, **Ա. Չեյթունյան**, Փ. Անթարյան, Ա. Քեօշկերեան, Երևան, 2004, էջ 1394:

<sup>6</sup> ՄՄ, ձեռ. 4315, 126ա-129ա:

<sup>7</sup> Ցուցակ հայերէն ձեռագրաց Չմնադի վանքի Մատենադարանին, հտ. Ա, ձեռ. 49 (հին թիվ 112), սկ. 240բ, կազմ.՝ Մեսրոպ վրդ. Քէշիշեան, Վիեննա, 1964, էջ 79-80:

<sup>8</sup> **Եղիշէ**, Բան խրատու յաղագս միանձանց, էջ 932:

<sup>9</sup> Գ. Բրուտյանը այս կարծիքը մեզ հայտնել է բանավոր, ուստի գրավոր աղբյուր չենք կարող նշել: Ժամերի անունները տե՛ս **Գ. Բրուտեան**, Հայկական Տոմարագիտութիւն, Երևան, 2016, էջ 146:

<sup>10</sup> **Անանիա Նարեկացի**, Խրատագիրք, բնագիրը՝ Հր. Թամրազյանի, «Մատենագիրք Հայոց», հտ. Ժ, էջ 425:

պահը բաղկացած էր չորս ժամից)<sup>1</sup>: Յերեկվա երրորդ պահը՝ Երեկոն, ներառում է ցերեկվա 9-12-րդ ժամերը, իսկ գիշերվա առաջին պահը՝ Խաղաղականը՝ գիշերվա 1-4 ժամերը: Այն կարծիքին ենք, որ Երեկոյան և Խաղաղական ժամերգություններն իրենց անունները ստացել են համապատասխան պահերի անուններից, ինչպես որ Առավոտյան ժամերգությունը՝ համապատասխան ժամի (գիշերվա 10-րդ ժամը):

Վանքերում ճաշի ժամն ազդարարվում է կոչնակահարությամբ՝ տեղյակ պահելու համար մենաստանի ընդարձակ տարածության մեջ իրենց խցերում առանձնացած մենակյացներին. «Մենաստանաց ընդարձակութիւնը, միացած յաճախ խրճթաց ցրուածութեան հետ, կը ստիպէր զանոնք հաւաքել ի ձայն ժամահարի»<sup>2</sup>: Պարտադիր էր նաև սեղան նստելուց առաջ և հետո աղոթել: Ինչպես Եղիշեն է ասում, միանձինք ճաշելուց առաջ փառաբանում էին Սուրբ Երրորդությունը. «ի ձայն բարձր փառատրեն զՍուրբ Երրորդութիւն», իսկ հետո ասում Գոհության աղոթքը. «Փա՛ռք քեզ, Տէ՛ր, փա՛ռք քեզ, թագաւոր մեր, զի ետուր մեզ կերակուր ուրախութեան. լցո՛ւ զմեզ Հոգւով Սրբոյ, զի գտցուք առաջի քո հաճոյք, եւ մի՛ ամաչեսցուք, զի դու հատուցանես իւրաքանչիւր ըստ գործոց իրեանց»<sup>3</sup>: Այս աղոթքը Եղիշեն վկայել է նաև իր Պատմագրքում<sup>4</sup>: Գրիգոր Տաթևացին վկայում է, որ կերակուրը օրհնել են. «Նշանաւ Խաչին կնքենք զամենայն կերակուրս և զըմպելիս» ուտելուց առաջ, իսկ հետո՝ «դարձեալ օրհնենք կրկին», սակայն նշում է, որ այլ վանքերում երեք անգամ են աղոթում՝ «ոմանք երեքկին օրհնեն. ի սկիզբն, ի մէջն եւ յետ կերակրոյն»<sup>5</sup>:

Հակոբ վրդ. Թոփուզյանը նշում է, որ Լիմի վանականները ճաշում էին օրը մեկ անգամ, ճաշու ժամերգությունից հետո, ուտելիքը բոլորի համար նույնն էր, վանականներից մեկը ճաշի ընթացքում ճառընտիրից

<sup>1</sup> Տե՛ս **Գ. Բրուտեան**, նշվ. աշխ., էջ 151-152. «Յերեկային պահերն են. Արշալոյս, կամ Լուսադէմ, կամ Աղօթարան, Արեւոյ ծայրք, Միջօրէ, կամ Հասարակ, եւ Երեկոյ: Գիշերային պահերն են. Խաղաղական, Գիշեր կամ Խոր գիշեր, Հաւախօս»:

<sup>2</sup> **Հ. Վարդան Հացունի**, Ճաշեր եւ խնճոյք հին Հայաստանի մէջ, էջ 277:

<sup>3</sup> **Եղիշէ**, Բան խրատու յաղագս միանձանց, էջ 932:

<sup>4</sup> **Եղիշէ**, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, «Մատենագիրք Հայոց», հտ. Ա, Լիբանան-Անթիլիաս, էջ 704:

<sup>5</sup> **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, Կ.Պոլիս, 1741, էջ 348:

ընթերցում էր կատարում, իսկ ճաշելուց առաջ և հետո վանահայրը կամ վարդապետներից մեկը օրհնում էր սեղանը և գոհության աղոթք վերածայնում սաղմոսներով և օրնհոթյամբ՝ խնդրելով Աստծուց «վասն աշխարհի զխաղաղութիւն, և Աթոռոց և վանօրէից և եկեղեցեաց շինութիւն և պայծառութիւն, և վասն ամենայն քրիստոնէից անդորրութիւն, յաջողութիւն ի գործս բարիս, և ազատութիւն յամենայն վտանգից և վարձադրել զայնոսիկ յանանց բարութիւնս, որք այցելու են մատակարար ի տուրս և յողորմութիւնս կամաւոր աղքատացելոցն ի Քրիստոս աստ մենացեալ կրօնաւորաց և մանաւանդ ննջեցելոց հոգւոց փրկութիւն և Երկնից արքայութիւն ժառանգութիւն»<sup>1</sup>, թեև Հակոբ վարդապետը չի նշում սեղանը օրհնելու այս կարգը, սակայն թերևս հետևել են Մաշտոց ծիսամատյանի կարգին, գուցե՝ որոշ հավելումներով:

«Կարգ եւ կանոն աղաւթից» խորագրով մատենագրական միավորը, որ բովանդակում է Սուրբ Երրորդության մասին դավանանքը և աղոթասացության կարգեր, ավանդում է նաև Թեղենյաց վանքի Սեղանօրհնեքի կարգը: Որպես «Կարգ եւ կանոն աղաւթից»-ի հեղինակ՝ ձեռագրերում նշված է Գրիգոր վարդապետը, ձեռագրերի մեծ մասում՝ մասնավորապես Գրիգոր Նարեկացին<sup>2</sup>: Համաձայն Վարդան Հացունու՝ հեղինակը Գրիգոր Սկևռացին է (Կիլիկիա, XII-XIII դդ.)<sup>3</sup>, իսկ Հրաչ Թամրազյանը վերագրում է Գրիգոր Նարեկացուն (X դ.): «Կարգ եւ կանոն աղաւթից»-ում վանականների համար տրված են ճաշի ժամերը, ճաշից առաջ և հետո ասվող աղոթքները: Ընդ որում, նշված է, որ սույն կարգը վերցված է Թեղենյաց վանքից. «Զի այսպէս ասեն ի Թեղենիս, եւ սուրբ Անտոնն եւ այլ սուրբ հարքն»:

Այստեղ պետք է նշել, որ երկար դարեր խոշոր մենաստաններ են եղել Մաքենյաց, Թեղենյաց, Սևանա վանքերը: Նրանցում են ամբողջացվել մեր ծիսական ժողովածուները. Մաքենյաց վանքում է Սողոմոն Մա-

<sup>1</sup> **Յակոբ վրդ. Թօփուզեան**, Զբօսարան, Երուսաղէմ, ձեռ. 2086, էջ 57:

<sup>2</sup> Տե՛ս Կարգ եւ կանոն աղաւթից, բնագիրը և առաջաբանը՝ Հր. Թամրազյանի, «Մատենագիրք Հայոց», հտ. Ժ, էջ 1073-1094: Ինչպէս նշում է Հր. Թամրազյանը, գործը առկա է Մաշտոցի անվան Մատենադարանի 18 ձեռագրերում, որոնցից 14-ում վերագրված է Գրիգոր Նարեկացուն:

<sup>3</sup> **Հ. Վարդան Հացունի**, Պատմութիւն Հայոց Աղօթամատոյցին, էջ 33, 37-38: Կարգ եւ կանոն աղաւթից, էջ 1074:

քենացին կազմել Տոնական ժողովածուն (747 թ.)<sup>1</sup>, Մաշտոց Ա Եղիվարդեցի հայրապետը, որ ուսանել էր Մաքենյաց վանքում, իսկ հետո եղել Սևանավանքի վանահայր, Սևանավանքում է խմբագրել և ամբողջացրել Մաշտոց ծիսամատյանը (IX դ.)<sup>2</sup>, Մաքենյաց և Թեղենյաց վանքերում է խմբագրվել Ժամագիրքը (հավանաբար նույն ժամանակաշրջանում՝ VIII-IX դդ.), գրվել են աղոթասացությանը վերաբերող խրատներ՝ «Ժամատեղաց խրատք Մաքենեաց ուխտին» «Ժամատեղաց խրատք Թեղենեաց ուխտին»<sup>3</sup>: Հետագայում Ներսես Շնորհալի հայրապետը այս վանքերում մշակված ժամասացությունների կարգը հաստատեց նաև Կիլիկյան Հայաստանի վանքերի համար. «այլ յետ սոցա յԸ եւ յԹ դարս բարգաւաճեցին որպէս կրօնաւորական կարգօք՝ այսպէս եւ դպրութեամբ վանորայք Սիւնեաց, մանաւանդ Մաքենոցացն (յորմէ ընծայեցան կրկին Սողոմոն վարդապետք), որոյ հայրենաւանդ կարգաց պահպանութիւն հոչակէր եւ յաւուրս Ն. Շնորհալոյ յետ կիսոյ ԺԲ դարու, որ յետ բերել անտուստ (որպէս եւ ի Թեղենեաց) զօրէնս ժամասացութեանց»<sup>4</sup>:

«Կարգ եւ կանոն աղաւթից»-ում, նկատի ունենալով տարվա տարբեր եղանակներին ցերեկվա ժամերի տևողության տարբերությունը, ասվում է, որ Սուրբ Զատիկից մինչև Խաչվերաց ճաշը պետք է լինի ճաշու իններորդ ժամից հետո, որովհետև երկար է ցերեկը, իսկ Սուրբ Խաչից հետո՝ երբ արեգակը մայր կմտնի. «Եւ յորժամ յինն ժամն աղաւթես, կերակուր ճաշակէ, զի ի Զատկէն մինչեւ ի Սուրբ Խաչն այս է ժամ ճաշակելոյ, զի մեծ է արն, եւ ի Խաչէն յետոյ՝ ի մտանել արեգականն»<sup>5</sup>: Այստեղ պետք է նկատի ունենալ մի պարզ հանգամանք. Սուրբ Զատիկի հաշվարկի հենքը

<sup>1</sup> Ա. Ղազարոսյան, Մաքենոցաց ուխտը և Սողոմոն Մաքենացին, «Էջմիածին» ամսագիր, 2002, Դ, էջ 39: Տոնականը կոչում են նաև Ճառընտիր: Սողոմոն Մաքենացու օրինակը չի պահպանվել, սակայն դրա մասին տեղեկությունը պահպանվել է Երզնկայի Ավագ վանքում 1200-1202 թթ. ընդօրինակված Մշո Ճառընտիր-Տոնականում (ՄՄ, ձեռ. 7729):

<sup>2</sup> Ստեփաննոս Օրբելեան, նշվ. աշխ., էջ 132: Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Երևան, 1961, էջ 81:

<sup>3</sup> Հ. Վարդան Հացունի, Պատմութիւն Հայոց Աղօթամատոյցին, էջ 429-443:

<sup>4</sup> Հ. Ղեւոնդ Ալիշան, Սիսական, Վենետիկ-Ս. Ղազար, 1893, էջ 23:

<sup>5</sup> Կարգ եւ կանոն աղաւթից, էջ 1089:

գարնանային օրահավասարն է (երբ 12 ժամ գիշեր և 12 ժամ ցերեկ է)<sup>1</sup>, իսկ Խաչվերացը նշվում է սեպտեմբերի 14-ի մոտակա կիրակի օրը, որից մի քանի օր անց աշնանային օրահավասարն է (սեպտեմբերի 23). այսինքն, Սուրբ Ջատկից մինչև Խաչվերաց ընկած ժամանակահատվածում ցերեկը միջինում 12 ժամ և ավելի է լինում:

Փորձենք ճշտել, թե ե՞րբ է ճաշու 9-րդ ժամը, և ե՞րբ է մայրամուտը՝ արտահայտված ժամանակաչափության այսօրվա միավորներով<sup>2</sup>: Հաշվարկը մեզ տրամադրել է աստղագետ-տոմարագետ Գրիգոր Բրուտյանը: Գոյություն ունի ժամաբաժանման 2 տեսակ՝ 1) օրը բաժանել 24 հավասար ժամի՝ յուրաքանչյուրը 60 րոպե (այժմ ընդունված տարբերակն է), 2) ցերեկն ու գիշերը առանձին-առանձին բաժանել 12-ական ժամերի, որի դեպքում ամառային արևադարձի շրջանում ցերեկային մեկ ժամի տևողությունը ժամանակաչափության այսօրվա միավորներով հավասար է 75 ր., ձմեռային արևադարձի ժամանակ՝ 45 ր., իսկ օրահավասարների ժամանակ՝ 60-ական ր.:

*Ցերեկը* սկսվում է արևածագին և ամառային արևադարձի շրջանում տևում է 15 ժամ (ժամանակաչափության արդի միավորներով): Գիշերն էլ սկսվում է Արևի մայրամուտին և տևում է 9 ժամ: Ուրեմն, ցերեկվա սկիզբը կլինի կեսգիշերից (այսինքն՝ ժամը 00-ից)  $9:2 = 4.5$  ժամ անց, այն է՝ ժամը 04<sup>30</sup>-ին, իսկ ցերեկվայ ավարտը, որ նույնն է, թե՛ գիշերվա սկիզբը կլինի դրանից 15 ժամ անց, այն է՝ 19<sup>30</sup>-ին: Ճաշու 9-րդ ժամը սկսվում է ցերեկվա 14<sup>30</sup>-ին և տևում մինչև 15<sup>45</sup>-ը (04<sup>30</sup>-ին եթե գումարենք 75 րոպե-

<sup>1</sup> Ս. Ջատիկը նշվում է գարնանային օրահավասարից՝ մարտի 21-ից սկսյալ Լուսնի առաջին լրմանը հաջորդող կիրակի օրը, այսինքն՝ մարտի 22-ից ապրիլի 25-ը ներառյալ 35 օրերի ընթացքում:

<sup>2</sup> Քանի որ ամռանը ցերեկվա տևողությունը երկար է, ուստի նպատակային չի եղել ողջ տարվա համար ճաշի ժամը սահմանել մայրամուտից հետո, այլ տարվա մի կեսի համար (Ս. Խաչից մինչև Ս՝ Ջատիկ) սահմանել են արևը մայր մտնելուց հետո, իսկ մյուս կեսի համար՝ Ճաշու 9-րդ ժամից հետո: Կարծում ենք, որ Թեղենյաց և շատ այլ վանքերում օգտագործել են գիշերը և ցերեկը առանձին 12-ական մասերի բաժանելու կարգը, որի դեպքում ժամը կարող է տևել 45-75 ր., ուստի 9-րդ ժամի տեղը, կախված տարվա եղանակից, փոխվում էր, և նպատակային չէր ճաշի ժամը սահմանել միայն Ճաշու 9-րդ ժամից հետո: Սակայն Անանիա Նարեկացու 9-րդ ժամին վերաբերող վերը նշված տվյալից կարելի է թեականորեն ենթադրել, որ որոշ վանքերում գործածվել է օրը 24 հավասար ժամերի բաժանելու կարգը, և ճաշելու ժամը հստակ եղել է 9-րդ ժամին:



անոց 8 ժամ, կստանանք  $14^{30}$ , 9-րդ ժամը կտևի մինչև  $14^{30}+75$  ր.  $=15^{45}$ , ժամը 9-ը ազդարարվում է  $15^{45}$ -ին): Գարնանային և աշնանային օրահավասարներին ցերեկվա և գիշերվա տևողությունները հավասար են իրար և 12-ական ժամ են: *Օրահավասարներին* արևածագը (այսինքն՝ ցերեկվա սկիզբը) կլինի կեսգիշերից  $12 : 2 = 6$  ժամ անց. սա լինում է ժամը  $06^{00}$ -ն: Յերեկվա 9-րդ ժամն էլ կսկսուի դրանից 8 ժամ հետո և կտևի  $14^{00}$ -ից մինչև  $15^{00}$ -ն (ժամը 9-ը ազդարարվում է  $15^{00}$ -ին): Արևի մայրամուտը կը լինի արևածագից 12 ժամ անց՝  $18^{00}$ -ին: *Ձմեռային արևադարձի շրջանում* ամենաերկար գիշերն է՝ 15 ժամ, և ամենակարճ ցերեկը՝ 9 ժամ: Արևածագը ձմեռնամուտի օրերին կլինի կեսգիշերից  $15 : 2 = 7.5$  ժամ անց, որ է ժամը  $07^{30}$ : Արևի մայրամուտը կլինի արևածագից 9 ժամ անց, այսինքն՝  $16^{30}$ -ին: (ՀՀ-ում ներկայումս կիրառվող դեկրետային ժամանակին անցնելու համար հարկ է աստ բերված բոլոր ժամերին գումարել 1-ական ժամ)<sup>1</sup>:

Այսպիսով, Ս. Խաչից մինչև Ս. Ջատիկ, երբ վանականները սկսել են ճաշել արևը մայր մտնելուն պես, նրանց ճաշի ժամանակի համար ստանում ենք ամենաշուտը՝  $16^{30}$ -ին, իսկ ամենաուշը՝  $18^{00}$ -ին: Ս. Ջատիկից մինչև Ս. Խաչ 9-րդ ժամը կարող է սկսել ամենավաղը  $14^{00}$ -ից մի փոքր ուշ, իսկ ամենաուշը՝ ամառային արևադարձին՝  $14^{30}$ -ին: Պետք է նաև նկատի ունենալ այն հանգամանքը, որ տվյալ ժամերգությունը տևում է մոտ 40 ր., որից հետո վանականները գնացել են իրենց խցերը, և քիչ անց՝ կոչնակի խփելուն պես համախմբվել ճաշի: Սակայն, ներկայումս ընդունված է ճաշու իններորդ ժամի ժամերգության սկիզբը համարել 9-րդ ժամի ավարտը, որը ժամանակաչափության ներկայիս միավորներով ժամը  $15^{00}$ -ն է<sup>2</sup>:

Այնուհետ «Կարգ եւ կանոն աղաւթից»-ում տրված են ճաշից առաջ և հետո ասվող աղոթքները: «Կարգ եւ կանոն աղաւթից»-ը ճաշակելուց առաջ հետևյալ Օրհնությունն է տալիս՝ հետևելով Թեղենյաց վանքին.

<sup>1</sup> Դեկրետային ժամանակը ժամանակի հաշվարկման մի համակարգ է, որում ժամանակը գոտայինից առաջ է 1 ժամով: Այն ընդունվել է ԽՍՀՄ-ում 1930 թվականի հունիսի 21-ից, և բոլոր ժամացույցները 1 ժամ առաջ են տարվել: ՀՀ-ում այսօր ևս գործում է դեկրետային ժամանակը. տե՛ս Գ. Բրուտեան, նշվ. աշխ., էջ 330, ծնթ. 160:

<sup>2</sup> Տե՛ս Նորայր արք. Պողարեան, Ծիսագիտություն, Նիւ Եորք, 1990, էջ 22: **Гаслов И., Кашкин А.**, Православное Богослужение, часть II, СПб, 2011, стр. 4:

«Գ (3) անգամ արհնեա, սաղմոս եւ քարոզ՝ որպէս կարգեալ է. յառաջն՝ Սուրբ Երրորդութիւնն, ապա զնշան Տէրունական, եւ զկնի ճաշակմանն՝ զՍուրբ Աստուածածինն, եւ նովաւ՝ զիր Միածինն: Զի այսպէս ասեն ի Թեղեհիս, եւ սուրբ Անտոնն եւ այլ սուրբ հարքն. երկոտասան ծունր կրկնէին յառաջ քան զճաշակելն զՓոխն լման ասելով, եւ զկնի ամենեքեան ասեն՝ «Ողորմած գթած է Տէր. կերակուր տայ երկիրաճաց իւրոց», եւ քարոզ՝ «Խնդրեսցուք հաւատով ի Տեառնէ, զի տացէ մեզ կերակուր ուրախութեան եւ լցուցէ զտրտութիւնս մեր ամէն բաւական ողորմութեամբ իրով. Տէրն ամենակալ կեցուցէ եւ ողորմեսցի»: Աղաթք. «Արհնեա Քրիստոս Աստուած, հոգետր արհնութեամբ զկերակուր եւ զըմպելի ծառայից քոց եւ շնորհեայ առողջութիւն հոգոյ եւ մարմնոյ, որպէսզի կրանաւորական պարկեշտութեամբ վայելելով ի մարմնաւոր պիտոյիցս, անանց բարեանց եւ երկնից արքայութեանց հաղորդս լիցուք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որ է արհնեալ յաւիտեանս»<sup>1</sup>:

Փորձենք ճշտել Օրհնության բաժինը՝ համադրելով տպագիր ժամագրքի հետ: Այսպէս, նախ փառաբանում էին Սուրբ Երրորդութեանը՝ «Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն», խաչակնքվում էին և երեք անգամ օրհնում սեղանը: Տասներկու անգամ ծնրադրելուց հետո ասում էին Սաղմոսը, ընդ որում՝ ամբողջությամբ, ինչպէս որ գրված է՝ «զՓոխն լման ասելով»: Սաղմոսը նշված չէ, սակայն, եթէ փորձենք վերականգնել, ապա XIII դարի ձեռագրերից սկսած մինչ տպագիր ժամագրքերում Սաղմոս ՃԽԴ-ն (144) է<sup>2</sup>. «Աչք ամենեցուն ի քեզ յուսան...», փոխը՝ «Բարձր առնեմ զքեզ, Աստուած իմ և թագաւոր իմ, և օրհնեմ զանուն քո յաւիտեան...»<sup>3</sup>: Այնուհետ մաղթանքն է, որը ՃԺ Սաղմոսից է (տող 4-5)՝ «Ողորմած գթած է Տէր...», ապա Քարոզը՝ «Խնդրեսցուք հաւատով ի Տեառնէ...»: Այս քարոզը որոշակի տարբերություններ ունի ժամագրքի քարոզի հետ, որն է «Աղաչես-

<sup>1</sup> Կարգ եւ կանոն աղաթից, էջ 1089:

<sup>2</sup> Ժամագիրք Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1902, էջ 406:

<sup>3</sup> Սաղմոս-փոխ այս կառույցն ընդունված է մեր ժամագրքում: Տոնացուցում օրինակները շատ են, նշենք մեկը – Կանոն Վերացման Սրբոյ Խաչին «Սաղմոս Դ Նշանեցաւ. Փոխ, Ի կարդալ». Ժամակարգութիւն Հայ. Ս. Եկեղեցւոյ, յորում պարունակին Սաղմոս Դ-աթի, Ժամագիրք Ատենի եւ Տօնացոյց, Զ տպ. (նմանատպութիւն 1915 թ. Դ. տպագրութիւնից), Վաղարշապատ, ի տպ. Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 1999, էջ 527:

ցուք զամենակալն Աստուած...»<sup>1</sup>: Ենթադրելի է, որ դարերի ընթացքում այն ավելի հստակեցվել է, կամ բնագրային փոփոխության արդյունք է: Աղոթքը՝ «Արհնեա Քրիստոս Աստուած...», գրեթե նույնությամբ պահպանվել է մինչ տպագիր ժամագրքերը:

«Կարգ եւ կանոն աղաթից»-ը ճաշակելուց հետո հետևյալ Գոհությանն է տալիս՝ հետևելով Թեղենյաց վանքին.

«Եւ զկնի ուտելուն՝ զՍուրբ զԱստուածածինն, եւ զնովա՝ զհար Միածինն: Քանզի այսպէս ասեն ի Թեղենիսն: Եւ ետ ճաշակմանն ասեն ամենեքեան. «Տէր Յիսուս, լցաք ի բարութեանց քոց, տացուք գոհութիւն Տեսնն Աստուծոյ մերոյ»: Եւ ապա՝ Սաղմոս. «Աչք Տեսնն ի վերայ երկիւղածաց», Ե տուն, յայնժամ. «Եւ եւս խաղաղութեան, Գոհացարուք ի վերայ լիութեանց պարգեաց Տեսնն Աստուծոյ մերոյ, որ հանապազ կերակրէ զմեզ առաք բարերարութեամբն իւրով: Տէրն ամենակալ կեցուցէ»: Եւ ասէ զաղաթս զայս ահիւ. «Արհնեալ ես, Տէր Աստուած մեր, որ կերակրես զմեզ ի մանկութենէ եւ տաս կերակուր ամենայն մտեղաց, լցո ուրախութեամբ եւ բերկրութեամբ զսիրտս մեր, զի հանապազ զամենայն բաւականութիւն ունիցիմք առաւելեալք ի գործս բարութեանց ի Քրիստոս Յիսուս՝ ի Տէր մեր, որ արհնեալ է: Խաղաղութիւն: Փա՛ռք քեզ, Տէր, փառք քեզ, Աստուած, փառք քեզ, փառաց թագաւոր, որ երուր մեզ զկերակուր ուրախութեան եւ լցուցեր ցնծութեամբ եւ ուրախութեամբ, լցո զմեզ Հոգւովդ Սրբով, զի գրդցուք առաջի քո հաճոյացեալք միամտեալք, զի դու գաս՝ հապուցանել զգործս իւրաքանչիւր, եւ Քեզ փառք»: Ձկնի՝ «Հայր մեր»<sup>2</sup>:

Փորձենք ճշտել Գոհության բաժինը՝ համադրելով տպագիր ժամագրքի հետ: «ՉՍուրբ Աստուածածինն, եւ նովա զհար Միածինն» մաղթանքը, փաստորեն, դուրս է եկել սեղանի օրհնության կարգից: Մյուս միավորները պահպանվել և աննշան բառային տարբերություններով առկա են ժամագրքում. Գոհության կցորդն է՝ «Տէր Յիսուս, լցաք...», ապա Սաղմոսը, որի համարը թեև նշված չի, սակայն նկատի է առված Սաղմոս ԼԲ-ի (32) վերջին հինգ տողերը, քանի որ բոլոր ձեռագրերում այս Սաղմոսն է: Ապա Գոհության քարոզն է՝ «Գոհացարուք ի վերայ լիութեանց», ապա 2 հատվածից բաղկացած Գոհության աղոթքը՝ «Արհնեալ ես... Փա՛ռք քեզ...», ավարտվում է Տերունական աղոթքով: Առաջին՝ «Արհնե-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 408:

<sup>2</sup> Կարգ եւ կանոն աղաթից, էջ 1090:

ալ ես...» հատվածը, ըստ Վարդան Հացունու, Հունարեն Ժամագրքից է՝, իսկ երկրորդ հատվածը, ինչպես տեսանք վերը, փաստել է նաև Եղիշեն, այսինքն՝ V դարում այն արդեն կիրառական էր: Սակայն, ներկայիս Ժամագրքում առկա են հավելյալ միավորներ. Սաղմոսից հետո Գոհության մաղթանքն է. «*Կերակրիչ եւ ուրախարար Տէր, փառք Քեզ, լցուցանող Քրիստոս, գոհանամք զՔէն*», և ամենավերջում՝ «*Ձկերողքս Աստուած օրհնեսցէ, սպասատրացն եւ երախտատրացն վարծս բարեաց պարգեւեսցէ, եւ օրհնեսցէ զամենեսեան: Քրիստոս Աստուած, որ զմեզ կերակրեսցէ եւ լիացոյց, նմա փառք յաւիտեանս, ամէն*» մաղթանքը:

Անդրադառնալով վերոգրյալ տարբերություններին՝ նայենք մի քանի ձեռագիր Ժամագրքեր: Վենետիկի Մխիթարյան Միաբանությունում պահվող վաղագույն ձեռագիր Ժամագրքում՝ ընդօրինակված 1284 թ. (Վենետիկ 677/629) բացակայում է «ՁՍուրբ Աստուածածինն, եւ նովաւ զիր Միածինն» միավորը և Գոհության աղոթքի առաջին հատվածը՝ «Արհնեալ ես, Տէր Աստուած մեր», իսկ մնացած բովանդակությունը նույնն է Թեղեւնյաց վանքի կարգի հետ<sup>2</sup>: «ՁՍուրբ Աստուածածինն, եւ նովաւ զիր Միածինն» միավորը գտնել չենք կարողացել: Վարդան Հացունին ևս նշում է, որ այն չկա իրեն հայտնի հին գրչագրերում. «Եթէ Տիրամօր մաղթանքն այդ մենաստանաց յատուկ էր, ուրմեն հասարակաց կանոնին մէջ չէր մտած, որով հին գրչագրաց մէջ ալ չենք գտներ աղոր հետքը»<sup>3</sup>: Վենետիկի 1408 թ. Ժամագրքում (ձեռ. 817/630) արդեն կա «Ձկերողքս Աստուած օրհնեսցէ» հավելումը<sup>4</sup>, Մաշտոցի անվան Մատենադարանի 1443 թ. Ժամագրքում (ձեռ. 6121) չկան հետագայի երկու հավելումները («Կերակրիչ...» և «Ձկերողքս...»), իսկ Մատենադարանի՝ XIV դարին վերագրվող ձեռ. 4531-ում արդեն իսկ կան հետագայի երկու հավելումները, և կարգը նույնական է ներկայիս տպագիր Ժամագրքերի հետ<sup>5</sup>:

<sup>1</sup> Հ. Վարդան Հացունի, Պատմութիւն Հայոց Աղօթամատոյցին, էջ 269: Հացունին հղում է Հունարեն Ժամագրքի հայերեն թարգմանությունը՝ «Գիրք Յունաց, որ կոչի Օրօթկիոն», տպ. 1749, էջ 110-112:

<sup>2</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Դ, թիւ 677, ձեռ. 629, էջ 871:

<sup>3</sup> Հ. Վարդան Հացունի, Ճաշեր եւ խնճոյք հին Հայաստանի մէջ, էջ 282:

<sup>4</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Դ, թիւ 817, ձեռ. 630, էջ 878:

<sup>5</sup> ՄՄ, ձեռ. 6121, 90ա-91բ, ՄՄ, ձեռ. 4531, 115բ-118բ:

Փաստորեն, «Կարգ եւ կանոն աղալթից»-ը մեզ է փոխանցում Թեղենյաց վանքում ամենաուշը VIII-IX դդ. սահմանված Սեղանօրհների կարգը, իսկ այնուհետ այն ենթարկվել է փոքրիկ խմբագրման և պահպանվել մինչ օրս: Առհասարակ, «Կարգ եւ կանոն աղալթից»-ի շնորհիվ հնարավոր է դառնում վերականգնել Թեղենյաց վանքի Սեղանօրհների կարգը, պահքին և սնունդին վերաբերող հարցերը<sup>1</sup>:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՍԵՂԱՆՈՅ  
Վասն մարմնաւոր կերակրոց եւ ըմպելեաց

<p>Թեղենյաց վանքի կարգը ըստ «Կարգ եւ կանոն աղալթից»-ի</p>	<p>Ժամագիրք, Վաղարշապատ, 1902</p>
<p><i>Գ (3) անգամ արհնեա, սաղմոս եւ քարոզ՝ որպէս կարգեալ է. յառաջն՝ Սուրբ Երրորդութիւնն, ապա զնշան Տէրունական...:</i> <i>Չի այսպէս ասեն ի Թեղենիս, եւ սուրբ Անտոնն եւ այլ սուրբ հարքն. երկուրասան ծունր կրկնէին յառաջ քան զճաշակելն զՓոխն լման ասելով:</i> <i>(Սաղմոսի համարը նշված չէ, սակայն ձեռագրերում ՃԽԴ (144) Սաղմոսն է - Լ.Թ.)</i></p>	<p><i>Պարտաստեն զսեղանն հացի, և զարդարեն կերակրօք, և կանգնին իւրաքանչիւր ոք ի տեղիս իւրեանց: Եւ գայ իշխանաւորն կամ քահանայն, և ասէ սաղմոս կցորդ:</i>  [Սաղմոս ՃԽԴ] Աչք ամենեցուն ի քեզ յուսան, և դու տաս կերակուր նոցա ի ժամու: [Փոխ] <i>Դպր. Բարձր առնեմ զքեզ, Աստուած իմ և թագաւոր իմ, և օրհնեմ զանուն քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից:</i> <i>Չօրհնապազ օրհնեցից զքեզ, և գովեցից զանուն քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից:</i> <i>Մեծ է Տէր և օրհնեալ է յոյժ, և մեծութեան նորա ոչ գոյ չափ: . . .</i> <i>(Սաղմոսը ժամագրքում ամբողջութեամբ է)</i></p>

<sup>1</sup> Ծեսին վերաբերող նյութը խմբագրելու և շտկումներ կատարելու համար շնորհակալութիւն եւք հայտնում Տ. Հայկազուն քահանա Սահակյանին:

<p><i>Եւ զկնի ամենքեան ասեն՝</i> «Ողորմած գթած է Տէր. կերակուր տայ երկիւղածաց իրոց»:</p>	<p>[Մաղթանք, Սաղմոս ՃԺ 4-5]<sup>1</sup> <i>Քահ.</i> Ողորմած գթած է Տէր. կերակուր տայ երկիւղածաց իրոց:</p>
<p><i>Եւ քարոզ՝</i> «Խնդրեսցուք հաւատով ի Տեառնէ, զի տացէ մեզ կերակուր ուրախութեան եւ լցուցէ զտկարութիւնս մեր ամէն բաւական ողորմութեամբ իրով. Տէրն ամենակալ կեցուցէ եւ ողորմեսցի»:</p> <p><i>Աղայթք.</i> «Արհնեա Քրիստոս Աստուած, հոգեւոր արհնութեամբ զկերակուր եւ զըմպելի ծառայից քոց եւ շնորհեայ առողջութիւն հոգոյ եւ մարմնոյ, որպէս զի կրանաւորական պարկեշտութեամբ վայելելով ի մարմնաւոր պիտոյիցս, անանց բարեանց եւ երկնից արքայութեանց հաղորդս լիցուք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որ է արհնեալ յաւիտեանս»:</p>	<p>[Քարոզ] <i>Սարկ.</i> Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Աղաչեսցուք զամենակալն Աստուած՝ զի պարգևեսցէ մեզ կերակուր ուրախութեան, և լցուցէ զսիրտ մեր ի լիութենէ արարածոց իրոց: Ամենակալ Տէր Աստուած մեր: [Աղոթք] Օրհնեա՛ Քրիստոս Աստուած մեր հոգևոր օրհնութեամբ զկերակուրս և զըմպելիս ծառայից քոց. և շնորհեա՛ առողջութիւն հոգւոյ և մարմնոյ: Որպէս զի կրօնաւորական պարկեշտութեամբ վայելելով ի մարմնաւոր պիտոյիցս՝ անանց բարեացոյ և երկնից արքայութեանդ հաղորդս լիցուք ընդ ամենայն սուրբս քո: Եւ գոհութեամբ փառաւորեսցուք զքեզ ընդ Հօր և ամենասուրբ Հոգւոյդ. այժմ: <i>(Ժամագրքում Քարոզն ու Աղոթքը առանձնացված չէ – Լ.Թ.):</i></p>
<p>-</p>	<p>Հայր մեր, որ յերկինս ես...:</p>
	<p><i>Եւ օրհնող սեղանոյն կալով կանգուն՝ և առեալ զհացն բեկանէ ընդ պատրաստացն, որք առններ կան, կամ ընդ այնմիկ, որ պատրաստողն է ճաշոյն, և նոքա առ ամենեսեան, եւ ասէ. Ճաշակեցէ՛ք խաղաղութեամբ. եւ նրստիս ի ճաշն: Իսկ եթէ վանականք իցեն, կամ անապատաւորք, նստցի</i></p>

<sup>1</sup> Միավորների անունները վերականգնել ենք ուղիղ փակագծերի մեջ՝ հիմք ընդունելով ՄՄ, ձեռ. 4531-ը (115բ-118բ) և Վարդան Հացունու «Ճաշեր եւ խնճոյք հին Հայաստանի մէջ» գիրքը (էջ 283), Ժամագիրք, Երուսաղէմ, 2003:

	<p>մին յեղբարց ի բարձրագոյն տեղոջ, և առեալ ընթեռնուցու զգիրս աստուածային. և ամենեքեան ունկն դիցեն ընթերցմանն՝ անմոռնչ ճաշակմամբ: Եւ եթէ ոք խնդրեսցէ զլուծումն ինչ տարակուսանաց՝ լուծցեն՝ որք կարողքն իցեն. և դարձեալ ճաշեսցեն լռելեայն, և ոչ աղաղակաւ: Եւ յետ յառնելոյ ի սեղանոյն, դարձեալ կացցեն ի տեղիս իրեանց: Եւ ասասցէ քահանայն:</p>
<p>Եւ զկնի ուտելուն՝ «Չսուրբ զԱստուածածինն, եւ զնովաւ՝ զիւր Միածինն»: Քանզի այսպէս ասեն ի Թեղենիսն:</p>	<p>-</p>
<p>Եւ ետ ճաշակմանն ասեն ամենեքեան. Տէր Յիսուս, լցաք ի բարութեանց քոց, Տացուք գոհութիւն Տեառն Աստուծոյ մերոյ:</p>	<p>[Կցորդ] Քահ. Տէր Յիսուս, լցաք ի բարութեանց քոց: Դպր. Տացուք գոհութիւն Տեառն Աստուծոյ մերոյ:</p>
<p>Եւ ապա՝ Սաղմոս. «Աչք Տեառն ի վերայ երկիւղածաց», Ե տուն:</p>	<p>[Սաղմոս ԼԲ, վերջին 5 տողը] Աչք Տեառն ի վերայ երկիւղածաց իւրոց, և ոյք յուսան յողորմութիւն նորա: Փրկել ի մահուանէ զանձինս նոցա, և կերակրել զնոսա ի սովո: Անձինք մեր համբերեսցեն Տեառն, զի օգնական և պաշտպան մեր է: Ի նա ուրախ եղիցին սիրտք մեր, և յանուն սուրբ նորա յուսացուք: Եղիցի ողորմութիւն քո, Տէր, ի վերայ մեր, որպէս յուսացաք ի քեզ: Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ:</p>
<p>-</p>	<p>[Մաղթանք] Քահ. Կերակրիչ և ուրախարար Տէր, փառք քեզ. լցուցանող Քրիստոս՝ գոհանամք զքէն:</p>
<p>Յայնժամ. «Եւ եւս խաղաղութեան:</p>	<p>[Քարոզ] Սրկ. Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:</p>

<p><i>Գոհացարուք ի վերայ լիութեանց պարգեաց Տեառն Աստուծոյ մերոյ, որ հանապազ կերակրէ զմեզ առաւր բարերարութեամբն իւրով: Տէրն ամենակալ կեցուցէ»:</i></p>	<p>Գոհացարուք ի վերայ լիութեանց պարգեաց Տեառն Աստուծոյ մերոյ, որ կերակրէ զմեզ օր ըստ օրէ առատապէս քաղցրութեամբ կամօք իւրովք. զի հոգեւոր բարութեան եւ երկնից արքայութեանն հաղորդս արասցէ զձառայս իւր ըստ ակնկալութեան յուսոյն մերոյ: Ամենակալ:</p>
<p><i>Եւ սաէ զաղալթս զայս ահիւ.</i> Արհնեալ ես, Տէր Աստուած մեր, որ կերակրես զմեզ ի մանկութենէ եւ տաս կերակուր ամենայն մսեղաց, լցո ուրախութեամբ եւ բերկրութեամբ զսիրտս մեր, զի հանապազ զամենայն բաւականութիւն ունիցիմք առաւելեալք ի գործս բարութեանց ի Քրիստոս Յիսուս՝ ի Տէր մեր, որ արհնեալ է: <i>Խաղաղութիւն:</i>  Փա՛ռք քեզ, Տէր, փառք քեզ, Աստուած, փառք քեզ, փառաց թագաւոր, որ ետուր մեզ զկերակուր ուրախութեան եւ լցուցեր ցնծութեամբ եւ ուրախութեամբ, լցո զմեզ Հոգւովդ Սրբով, զի գտցուք առաջի քո հաճոյացեալք միամտեալք, զի դու գաս՝ հատուցանել զգործս իւրաքանչիւր, եւ Քեզ փառք:</p>	<p>Աղօթք Օրհնեալ ես Տէր Աստուած մեր՝ որ կերակրես զմեզ ի մանկութենէ, և տաս կերակուր ամենայն մսեղեաց. լցո՛ ուրախութեամբ և բերկրութեամբ զսիրտ մեր: Որպէս զի զամենայն բաւականութիւն ունիցիմք առաւելեալք ի գործս բարութեան ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր: Որում վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և: <i>Խաղաղութիւն ամենեցուն.</i> <i>Աստուծոյ երկիրպագեցուք:</i> Փառք քեզ, Տէ՛ր, փառք քեզ թագաւոր փառաց. որ ետուր մեզ կերակուր ուրախութեան և լցուցեր զսիրտ մեր ի լիութենէ ամենաբաւական ողորմութեան քոյ՝ լցո՛ և այժմ զմեզ Հոգւովդ քով Սրբով, որպէս զի գտցուք քոյ հաճոյք, և մի՛ ամաչեցեալք, զի դու գաս և հատուցանես իւրաքանչիւր ըստ գործս իւր. և քեզ վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ. այժմ և Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. Ամէն:</p>
<p><i>Չկնի՛ Հայր մեր:</i></p>	<p>Հայր մեր, որ յերկինս ես:</p>
<p>-</p>	<p>[Մաղթանք] Չկերողքս Աստուած օրհնեցէ. սպասաւորացն և երախտաւորացն վարձս բարեաց պարգևեցէ. և օրհնեցէ զամենեսեան: Լիութիւն սեղանոյս անն-</p>



	լագ և անպակաս եղիցի <sup>1</sup> : Քրիստոս Աստուած, որ զմեզ կերակրեաց և լիացոյց, նմա փառք յափտեանս ամէն:
--	--

*Բանալի բառեր – վանական, վանք, սեղան օրհնելու կարգ, ժամագիրք, վանականների սնունդ, Թեղենյաց վանք, Սևանա վանք, Լիմ մենաստան,*

## ЕДА МОНАХОВ И МОЛИТВЫ ТРАПЕЗЫ В АРМЯНСКИХ МОНАСТЫРЯХ

*Լուսինե Գումանյան*

**Ключевые слова:** монахи, монастырь, молитвы трапезы, часослов, пища монахов, Тегенисский монастырь, Севанский монастырь, монастырь Лим.

В этой статье, на основании различных литературных свидетельств, мы представили еду монахов: и отдельных отшельников, и живших в монастырях, а также молитвы Трапезы в армянских монастырях. Еда монахов была довольно скромной, они постили большую часть года, мало ели молочных продуктов, не ели мяса и не пили вина. В частности, мы представили еду монастырей Лима и Севана. В статье мы уточнили молитвы Трапезы. До нас дошел орден Тегенисского монастыря (VIII-IX вв.), который мы сравнили с манускриптами Часослов разных веков и еще печатными Часословами. В результате выяснилось, что молитвы трапезы Тегенисского монастыря сохранился до наших дней с небольшими изменениями.

<sup>1</sup> «Լիութիւն սեղանոյս աննուագ և անպակաս եղիցի» հատվածը չկա տպագրում, սակայն առկա է որոշ ձեռագրերում, օր.՝ ՄՄ, ձեռ. 4531, ՄՄ, ձեռ. 4315: Ձեռագրերում մաղթանքը երբեմն մի փոքր տարբեր է, «սպասատրացն և երախտատրացն»-ի փոխարեն ՄՄ, ձեռ. 4531 ունի՝ «Աշխատատրացն, երախտատրացն» (115ա), իսկ ՄՄ, ձեռ. 4315՝ «Աշխատատրացն եւ երախտատրացն եւ վաստակատրացն» (129ա):

---

## FOOD OF MONKS AND PRAYERS AT MEALTIME IN ARMENIAN MONASTERIES

*Lusine Tumanyan*

**Key Words:** *monk, monastery, prayers at mealtime, horologion, food of the monks, Teghenis monastery, Sevan monastery, Lim monastery.*

In this article, based on various literary testimonies, we presented the food of monks: both individual monks and those who lived in monasteries, as well as the prayers at mealtime in Armenian monasteries. The food of the monks was rather modest, they fasted for most of the year, ate little dairy products, did not eat meat, and did not drink wine. In particular, we presented food of Lim and Sevan monasteries. In the article we have clarified the prayers at mealtime in monasteries. The order of the Teghenis monastery (VIII-IX centuries) has come to us, which we compared with the manuscripts of Horologion of different centuries and with the printed Horologion. As a result, it turned out that the prayers at mealtime of the Teghenis monastery has been preserved to this day with minor changes.